— Այդ կ'իմանամ,— ըսաւ ծերը ժպտելով,— ի՞նչ մտածեցիր:

— Այն որոշեցի, որ ժամ առաջ հեռանամ Տարոնոյ:

— Ապրի՛ս իշխանիկս, ես միշտ կ'ըսէի թէ դու շատ խելօք ես: Ուրեմն հիմա կ'ընթրենք, կը հեծնենք ճամփայ կ'ելնենք:

— Այ՞ս գիշեր, — հարցուց Գրիգոր զարմանքով:

— Այո, իշխանիկս, պապենական առակը «Աղուէսի շուքին տակ չի պառկիլ» կը պատուիրէ:— Տղա՛ք, դուք ելէք, մեզ ընթրիք պատրաստեցէք, շուտով ձիերան գարին կ'ախեցէք:

Տղաքը ելան, եւ երկուքը միայն մնացին:

— Բայց ինչո՞ւ այդչափ շտապենք, հայրիկ:

— Քու հօրեղբայրդ է՝ բայց շատ օձ է, իշխանիկս: Ես զինք լաւ կը ճանչեմ: Քիչ մը ձիւնի նեղութիւն կը քաշենք երկու ժամի չափ, բայց աւելի ապահով եւ հանգիստ կ'երթանք՝ Առաքելոց վանքը այս գիշեր կ'անցնենք, եւ վաղն առաւօտ ինչ ճամփայ բռնելիս կը մտածենք:

— Շատ բարի:

Շուտ մը ելան. խորովածը պատրաստ էր, Տարօնս գինին գերագոյն եւ առատ: Կերան կը շտացան. երբ ձիերը կը թամբէին, Գրիգոր հրամայեց:

— Գազրիկ, երրորդ արաբացի նժոյգը Զաւէն եղբօր համար թամբել տուր, եւ բեռ եթէ կայ նոր ձիուն վրայ դնել:

Հանդարտ ձիւնաբեր օդ մ'էր, Զաւէն, որ Հայաստան ամբողջ իւր տան պէս կը ճանչեր, առջեւեն կը ձգէր ձին, մինչ որ Առաքելոց վանք հասան: Վանահայրը, որ ծերուն հին բարեկամն էր, մեծ սիրով զիրենք ընդունեց եւ այն պիշեր Գրիգոր Զաւէնի հետ ձմեռուան երկայն պիշերն անցուց պատմելով իւր պատմութիւնը եւ լսելով իւր ընտանեաց դժբախտութիւնը. հազիւ թէ առաւօտեան դէմ անկողին մտան մեր այս բարեկամք: